ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Թուղթ Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց պատուիրել վիճակային բոլոր կոնսիստորիաներին ուղարկել բոլոր հոգևոր հաստատութիւնների (եկեղեցի, վանք, թեմական դպրանոց, ծխական դպրոց և այլն) օգտին եղած կտակների պատճէններն և մանրամասն տեղեկութիւններ՝ կտակի դրամագլուխների տոկոսների գործադրութեան և անշարժ կալուածների արդիւնաբերման եղանակի մասին. այլ և հանել նոյնպիսի տեղեկութիւններ Սինոդի գործերից՝ Մայր Աթոռի, Գէորգեան Հոգևոր ճեմարանի և այլ հոգևոր հաստատութիւնների օգտին եղած կտակների մասին և պահանջուած տեղեկութիւնները լրացնելուց յետոյ կազմել կտակների համար ցուցակ, որ և տպագրել տալուց յետոյ՝ մի մի օրինակ ուղարկել վիճակային Կոնսիստորիաներին և նոյնպիսի օրինակներ պահել Սինոդում. 25 յունվ. 1911 թ. № 1231.

Թուղթ օհնութեան և գոհունակութեան Բագուեցի Տիկին Հռիփսիմէ Ադամեանի անունով, որ նուիրաբերում է Տ. Գարեգին վարդապետ Յովսէփեանին 5000 ռուբլի Հայոց մանրանկարչական գեղարուեստի մասին նրա կազմած աշխատութեան հրատարակութեան համար. 30 յունվարի 1911 թ. № 1245.

Առաջադրութիւն ս. Էջմիածնի Սինոդի անունով, որի հետ ուղարկուեց մի հարիւր (100) ռուբլի, որ նուիրել է Մայր Աթոռի օգտին Ագուլիսի բժիշկ Պ. Վահան Ն. Գէորգեանն իւր հանգուցեալ Նիազ հօր յիշատակին. 31 յունվարի 1911 թ. № 1249.

Թուղթ օրհնութեան և մխիթարութեան յիշեալ բժիշկ Պ. Վահան Ն. Գէորգեանի անունով յիշեալ նուիրաբերութեան առթիւ. 31 յունվարի 1911 թ. № 1250.